ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅ ԱՐՎԵՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը գումարեց երիտասարդ հայ արվեստաբանների գիտական վեցերորդ նստաշրջանը՝ նվիրված Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակին (26–27 նոյեմբերի, 2011), որի աշխատանքներին մասնակցեցին ԳԱԱ արվեստի ինստիտուտի և գիտակրթամշակութային այլ օջախների՝ Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի, Հայաստանի պատմության թանգարանի, Երևանի պետական համալսարանի երիտասարդ գիտնականները:

ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանը *բացման խոսքում կարևորեց նմանատիպ նստաշրջանների կազմակերպման և շարունակականության հանգամանքը, քանզի դա հնարավորություն է ընձեռում բացահայտել Հայաստանի Հանրապետությունում առկա երիտասարդ արվեստաբանների ներուժը: «Պատահական չէ, որ գիտաժողովը նվիրված է ՀՀ անկախության 20-ամյակին,– ասաց նա.– նստաշրջանի մասնակիցները որպես արվեստաբաններ ձևավորվել են հենց անկախության շրջանում: Հատկանշական է նաև, որ երիտասարդ գիտնականների ամենամյա գիտական նստաշրջանները ևս սկզբնավորվել են Հայաստանի երրորդ Հանրապետության տարիներին՝ 2005 թվականից»:*

Գիտական նստաշրջանի մասնակիցներին ողջունեց ՀՀ ԲՈՀ-ի նախագահի տեղակալ, բանասիրական գիտությունների դոկտոր Լիլիթ Արզումանյանը, *ով իր խոսքում նշեց. «Պետք է հավատանք, որ կգան իրական արժեքների գնահատման ժամանակները, և այսօր ձեր ցանկացած լավ հոդվածը, լավ զեկուցումը մի քար է մեր ապագա ամուր պատի համար…»:*

Երկօրյա նստաշրջանի չորս նիստերի ընթացքում լսվեցին հետևյալ զեկուցումները:

«Դվինի կենտրոնական թաղամասի V–VI դդ. ճարտարապետական համալիրի վերակազմությունը» զեկուցման մեջ Արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի գիտաշխատող, ճարտարապետության թեկնածու Արեգ Հասրաթյանն *անդրադարձավ Հին Հայաստանի մայրաքաղաք Դվինի ավերված սբ.Գրիգոր տաճարի, կաթողիկոսական պալատի և միանավ բազիլիկի ճարտարապետական հորինվածքի գիտական վերակազմության հարցերին: «Գառզուի բեմանկարչությունը. Տիերի Մոլնիեի «Ժաննան և դատավորները» դրաման» թեման շոշափեց Արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի բաժնի կրտսեր գիտաշխատող* Մարգարիտա Քամալյանը: *Ըստ զեկուցողի՝ նկարչի կերտած բեմանկարչության հաջողութ*

յան բանալին 1960-ականներին մեծ տարածում ստացած կոնստրուկտիվիստական կառույցի ստեղծումն էր, նկարչի ուրույն ոճն ու ներկայացման սցենոգրաֆիկ կերպարի համապատասխանությունը դրամատուրգի և ռեժիսորի մտահղացմանը: Արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Արթուր Ավանեսովը *ներկայացրեց ժամանակակից երաժշտարվեստի ընդհանուր համատեքստում արդի հայ երաժշտության ընդհանուր ուրվագծերը՝ քննության առնելով արդի առաջատար կոմպոզիտորների ստեղծագործությունները՝ բարձրացնելով մի շարք հրատապ հարցեր: Հովհ. Թումանյանի և Ավ. Իսահակյանի տուն-թանգարաններում պահվող Փանոս Թերլեմեզյանի ստեղծագործությունների վերաբերյալ զեկուցման մեջ Արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի բաժնի գիտաշխատող* Մերի Կիրակոսյանը *ներկայացրեց էջեր Թումանյանի հետ առնչվող նկարչի հուշերից, քննության առավ բանաստեղծների տուն-թանգարաններում պահվող Թերլեմեզյանի հինգ աշխատանքները, գիտական շրջանառության մեջ դրեց դրանցից երեքը՝ մինչ օրս չուսումնասիրված նորահայտ էտյուդները: Հայաստանի վաղ միջնադարյան կոթողների ակունքներին նվիրված բանախոսության մեջ Հայաստանի պատմության թանգարանի էքսպոզիցիոն բաժնի վարիչ, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի դասախոս, արվեստագիտության թեկնածու* Գրիգոր Գրիգորյանն *ուսումնասիրել էր պատմագրության և մասնագիտական գրականության մեջ կոթողներին վերաբերող վկայություններն ու տեսակետները: Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դասախոս, արվեստագիտության թեկնածու* Տաթևիկ Շախկուլյանը *վեր հանեց ազգային երաժշտության առանձնահատկությունների հիման վրա երաժշտական-տեսական գիտելիքներ ուսուցանելու խնդիրը, որը կարևորել է դեռևս Կոմիտասը «Տարրական երաժշտութիւն» և «Տարրական երաժշտութիւն. տեսական և գործնական դասընթաց» դասագրքերում:*

Սիմվոլիզմի գեղարվեստական մեթոդի և Հակոբ Գյուրջյանի արվեստում դրա արտացոլմանն էր նվիրված Արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի բաժնի կրտսեր գիտաշխատող Մանե Մկրտչյանի *զեկուցումը: «Արվեստների համակարգման հունական ավանդույթը. ազդեցությունները հայ միջնադարյան տեսական մտքի վրա» զեկուցման մեջ Արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի ասպիրանտ, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի գիտաշխատող* Արուսյակ Թամրազյանը *ներկայացրեց Արիստոտելի և Պլատոնի համակարգերում առկա մարդկային ընկալման, ճանաչողության ոլորտների դասակարգումը հին հունական տեսության մեջ, ինչպես նաև անդրադարձավ նորպլատոնական գեղագիտության մեջ դրանց փոխակերպումներին և վերջիններիս մեկնաբանությունը հայ քրիստոնեական միջնադարում: Կոմպոզիտոր և դաշնակահար Սուրեն Զաքարյանի «Quasi սոնատինի» կատարողական մոտեցումների համեմատական վերլուծության հիման վրա ստեղծագործության կատարողական մեկնաբանության այլընտրանքային տարբերակների հնարավորության մասին էր Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ասպիրանտ* Սուսաննա Ղազարյանի *զեկուցումը: «Մշակութային ժառանգության սքանչելիքը*

(տեսակետներ Սեմնանի տարածքում գբոսաշրջության զարգացման վերաբերյալ)» թեմայով էր Արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի ասպիրանտ Ղազալ Ֆատեհի *բանախոսությունը, իսկ նույն ինստիտուտի ճարտարապետության բաժնի ասպիրանտ* Աբբաս Ռահիմյանի *զեկուցումը շոշափում էր Իրանի Ռաշտ քաղաքի Շահրդարի հրապարակի «հանրայնացման» հնարավորությունների գնահատման հարցերը: Հայ անվանի նկարիչ Ռուդոլֆ Խաչատրյանի դիմանկարներում անուրջների և իրականության միաձուլման խնդիրն արծարծեց Երևանի պետական համալսարանի դասախոս* Հռիփսիմե Վարդանյանը:

Գառզուի ջրաներկ աշխատանքների մասին էր Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի դասախոս, արվեստագիտության թեկնածու Արմեն Հովեսյանի *զեկուցումը: Ժամանակակից թատրոնում փաստագրական ժանրին նվիրված զեկուցման մեջ Արվեստի ինստիտուտի թատրոնի բաժնի գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու* Սառա Նալբանդյանն *անդրադարձավ արդի արևմտյան մշակույթի հակասական երևույթներից մեկին, այսպես կոչված, «վերբատիմ» թատրոնին, որը, հենված լինելով փաստաթղթերի և հարցազրույցների վրա, կարծես հակասում է մինչ օրս գոյություն ունեցող դրամատուրգիական ձևերին: Ջրաղացների ճարտարապետությանն էր նվիրված Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի գիտական բաժնի կրտսեր գիտաշխատող, ճարտարապետության թեկնածու* Մեսրոպ Մնացականյանի *ելույթը: Իրանական կինոազդագրի զարգացման հիմնական փուլերի, կերպարվեստի այդ բնագավառի ամփոփ պատմական ակնարկի, կինոպլակատում առավել մեծ ներդրում ունեցող նկարիչների և վերջիններիս կողմից ներմուծված նորարարությունների մասին էր Արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի ասպիրանտ* Շաղի Ղոմշեհի *բանախոսությունը:*

Մատենադարանում կատարված ուսումնասիրությունների արդյունքում 16 համարների ներքո հանգրվանած XV դարի ժապավենաձև հմայիլների նկարագրման, բովանդակային և նյութի հետ կապված մանրամասերով էր հագեցած Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի գիտաշխատող, Երևանի պետական համալսարանի դասախոս Դավիթ Ղազարյանի *զեկուցումը: Հայ դաշնամուրային երաժշտության մեջ ատոնալ գրելաոճի սկզբունքներն Արամ Սաթյանի «Վեց Բագատել» և Հրաչյա Մելիքյանի «Շարքը» դաշնամուրային ստեղծագործություններում բացահայտեց Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ասպիրանտ* Լիլիթ Արտեմյանը, *որը վերլուծեց երկու ստեղծագործությունների տեխնիկական հիմքերի առանձնահատկությունները, կատարողական տեսանկյունից դիտարկված գեղարվեստական գաղափարը: Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ասպիրանտ* Անի Առուշանյանի *«Վարիացիոն սկզբունքը հայ կոմպոզիտորների դաշնամուրային ստեղծագործություններում» զեկուցումը շոշափում էր հայ դաշնամուրային երաժշտության մեջ թե՛ վարիացիոն ձևում գրված գործերը և թե՛ այն երկերը, որոնցում վարիացիոն սկզբունքը կարևոր արտահայտչամիջոց է: Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի ասպիրանտ* Արմենակ Գրիգորյանն *իր զեկուցման մեջ XIX դարի և XX դարասկզբի հայ պարբերական մամուլը դիտարկեց*

որպես հայ արվեստաբանության մասնագիտական և գիտական դրսևորման հարթակ թեման: Ալեքսանդր Հարությունյանի՝ 1976-ին ստեղծված, պրոֆեսոր Վիլլի Սարգսյանին նվիրված, հազվադեպ կատարվող «Վեց տրամադրություն» շարքը ներկայացրեց Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ասպիրանտ Անահիտ Մարգարյանը*: Ուսումնասիրելով Բեկ-Նազարյանի «Նամուս» (1925) և «Պեպո» (1935) ֆիլմերը որպես ռեալիստական, գեղարվեստական ստեղծագործությունների օրինակներ՝ Արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի բաժնի գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու* Արսեն Համբարձումովը *բացահայտեց դրանց բովանդակությանը բնորոշ առանձնահատկությունները*:

Գիտական նստաշրջանի արդյունքներն ամփոփեց Արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ, արվեստագիտության դոկտոր Աննա Ասատրյանը*:*

Նստաշրջանն անցավ ակտիվ քննարկումների և հետաքրքիր հարցադրումների մթնոլորտում:

ՄԵՐԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ